



**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԲԱՄԲԱԿԱՇԱՏԱՏ
ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ**

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Բամբակաշատ համայնք
22, Արմավիրի մարզ, գ.Բամբակաշատ, (0237)79299, bambakashat.armavir@mta.gov.am

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

16 հունվարի 2017 թվականի N 01

ՕՐԱԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 12-րդ հոդվածի 4-րդ մասով

ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇՈՒՄ Է՝

- Հաստատել Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Բամբակաշատ գյուղական համայնքի ավագանու 2017 թվականի հունվարի 16-ի թիվ 01 նիստի օրակարգը՝ համաձայն հավելվածի:
- Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից

ԱՎԱԳԱՆՈՒ ԱՆՂԱՄՆԵՐ՝	ԿՈՐՄ	ԴԵՄ	ՁԵՆՆՊԱՀ
1. Բաբայան Աշոտ	
2. Գևորգյան Կարինե	
3. Հարությունյան Կարեն	
4. Մարգարյան Էդգար	
5. Մարիբեկյան Գոռ	
6. Մարիբեկյան Մարտիկ	
7. Տեր-Գեղամյան Գեղամ	

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝

Ա.ԵՂԻԱԶԱՐՅԱՆ



ՀԱՎԵԼՎԱԾ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ
ՄԱՐԶԻ ԲԱՄԲԱԿԱՇԱՏ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ
ԱՎԱԳԱՆՈՒ 2017 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆՎԱՐԻ 16-Ի ՕՐՈՇՄԱՆ
01 ՈՐՈՇՄԱՆ

Օ Ր Ա Կ Ա Ր Գ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԲԱՄԲԱԿԱՇԱՏ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ
ԱՎԱԳԱՆՈՒ 2017 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆՎԱՐԻ 16-Ի ՕՐՈՇՄԱՆ

1. ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԲԱՄԲԱԿԱՇԱՏ ԳՅՈՒՂԱԿԱՆ
ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2017 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆՎԱՐԻ 16-Ի ԹԻՎ 01 ՆԻՄՏԻ ՕՐԱԿԱՐԳԻ
ՀԱՍՏԱՏՈՒՄ:
/ԶԵԿ. Ա. ԵՂԻԱԶԱՐՅԱՆ /
2. ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԲԱՄԲԱԿԱՇԱՏ ԳՅՈՒՂԱԿԱՆ
ՀԱՄԱՅՆՔԻ 2017-2021 ԹՎԱԿԱՆՆԵՐԻ ՀՆԳԱՄՅԱ ԶԱՐԳԱՅՄԱՆ ԾՐԱԳԻՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ
ՄԱՍԻՆ:
/ԶԵԿ. Ա. ԵՂԻԱԶԱՐՅԱՆ /
3. ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԲԱՄԲԱԿԱՇԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ
ԱՎԱԳԱՆՈՒ 2016 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 18-Ի ԹԻՎ 16-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ
ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ:
/ԶԵԿ. Ա. ԵՂԻԱԶԱՐՅԱՆ /
4. ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԲԱՄԲԱԿԱՇԱՏ ԳՅՈՒՂԱԿԱՆ
ՀԱՄԱՅՆՔԻ 2016 ԹՎԱԿԱՆԻ ԲՅՈՒՋԵԻ ԿԱՏԱՐՄԱՆ ՏԱՐԵԿԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅԱՆ
ՄԱՍԻՆ:
/ԶԵԿ. Ա. ԵՂԻԱԶԱՐՅԱՆ /
5. ՄՇՏԱԿԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎՆԵՐ ՍՏԵՂԾԵԼՈՒ ՄԱՍԻՆ:
/ԶԵԿ. Ա. ԵՂԻԱԶԱՐՅԱՆ /
6. ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԲԱՄԲԱԿԱՇԱՏ ԳՅՈՒՂԱԿԱՆ
ՀԱՄԱՅՆՔԻ 2017 ԹՎԱԿԱՆԻ ՀԱՄԱՐ ԱՆԱՄՆԱԳԼԽԱՔԱՆԱԿԻ ՀԱՇՎԱՌՄԱՆ
ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ:
/ԶԵԿ. Ա. ԵՂԻԱԶԱՐՅԱՆ /

7. ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԲԱՄԱԲԿԱՇԱՏ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2017 ԹՎԱԿԱՆԻ ՀԵՐԹԱԿԱՆ ՆԻՍՏԵՐԻ ԱՆՑԿԱՑՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՅԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ:

/ԶԵԿ. Ա. ԵՂԻԱԶԱՐՅԱՆ/

8. ՀԱՄԱՅՆՔԻ ՄԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՄԱՅՈՂ ԳՈՒՅՔԸ ԱՃՈՒՐԴԱՅԻՆ ԿԱՐԳՈՎ ԿԱՃԱՌԵԼՈՒ ՄԱՍԻՆ:

/ԶԵԿ. Ա. ԵՂԻԱԶԱՐՅԱՆ/

ԲԱՄԲԱԿԱՇԱՏԻ ԳՅՈՒՂԱՊԵՏԱՐԱՆԻ

ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՔԱՐՏՈՒՂԱՐ՝



Ս. ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԲԱՄԲԱԿԱՇԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Բամբակաշատ համայնք
ՀՀ, Արմավիրի մարզ, գ.Բամբակաշատ, (0237)79299, bambakashat.armavir@mta.gov.am

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

16 հունվարի 2017 թվականի N 02-Ն

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԲԱՄԲԱԿԱՇԱՏ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ 2017-2021 ԹՎԱԿԱՆՆԵՐԻ ՀՆԳԱՄՅԱ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԾՐԱԳԻՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի առաջին մասի 2-րդ կետով, 53-րդ հոդվածով, «Իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 56-րդ հոդվածի երկրորդ մասով և հիմք ընդունելով համայնքի ղեկավարի առաջարկությունը.

ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇԵՑ՝

1. Հաստատել Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Բամբակաշատ գյուղական համայնքի 2017-2021 թվականների հնգամյա զարգացման ծրագիրը՝ համաձայն հավելվածի:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

ԱՎԱԳԱՆՈՒ ԱՆՂԱՄՆԵՐ՝	ԿՈՂՄ	ՂԵՄ	ԶԵՆՆՊԱՀ
1. Բաբայան Աշոտ	
2. Գևորգյան Կարինե	
3. Հարությունյան Կարեն	
4. Սարգսյան Էդգար	
5. Սարիբեկյան Գոռ	
6. Սարիբեկյան Մարտիկ	
7. Տեր-Գեղամյան Գեղամ	

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝  Ա.ԵՂԻԱԶԱՐՅԱՆ



Հավելված
Հայաստանի Հանրապետության
Արմավիրի մարզի Բանբակաշատ
համայնքի ավագանու
2017 թվականի հունվարի 16-ի
N3 – ն որոշման



**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ
ԲԱՆԲԱԿԱՇԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ
2017-2021թթ.
ՀՆԳԱՄՅԱ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԾՐԱԳԻՐ**

Կազմել է՝ համայնքի ղեկավար Արթակ Եղիազարյան

Հաստատվել է՝ համայնքի ավագանու 2017թվականի հունվարի 16-ի N 1 նիստի թիվ
Յորոշմամբ

Բանբակաշատ համայնք - 2017թ.

Ներածություն

Համայնքի հնգամյա զարգացման ծրագիրը (այսուհետ՝ ՀՀԾ) համայնքի սոցիալ-տնտեսական իրավիճակի համալիր վերլուծության և առկա հիմնախնդիրների բացահայտման, ֆինանսական, տնտեսական, բնական և մարդկային ռեսուրսների գնահատման արդյունքում նպատակային զարգացման տեսանկյունից ձեռնարկվելիք քայլերի ամբողջությունն արտահայտող փաստաթուղթ է, որը ենթադրում է համայնքի հիմնախնդիրների արդյունավետ լուծում և համայնքի տեսլականի իրականացում:

ՀՀԾ-ում ներառվում են համայնքի բոլոր պարտադիր խնդիրները և դրանց լուծման նպատակով նախատեսվող միջոցառումները: Միջոցառումները պետք է հստակ նկարագրված լինեն, իսկ նախատեսված արդյունքները՝ չափելի: Դրանց իրականացումը պետք է շարունակաբար մոնիթորինգի ենթարկվի, որպեսզի սահմանված թիրախներից շեղումների դեպքում հնարավոր լինի քայլեր ձեռնարկել միջոցառումներ պլանավորված հուն վերադարձնելու նպատակով: ՀՀԾ շրջանակներում իրականացված յուրաքանչյուր միջոցառում պետք է գնահատվի, որպեսզի բացահայտվեն թիրախային արդյունքներից ինարավոր շեղումների պատճառները, մշակվեն միջոցառումների իրականացման ավելի արդյունավետ իրականացման այլընտրանքային տարբերակներ և հետագայի համար դասեր քաղվեն:

Համայնքի զարգացման հնգամյա ծրագիրը այն հիմնական փաստաթղթերից մեկն է, որը մշակվում է համայնքի ղեկավարի և նրա աշխատակազմի կողմից, քննարկվում և հաստատվում է համայնքի ավագանու կողմից և դրվում է գործողության մեջ: Այն իրենից ներկայացնում է համայնքի սոցիալ-տնտեսական իրավիճակի համալիր վերլուծության և առկա հիմնախնդիրների բացահայտման, ֆինանսական, տնտեսական և մարդկային ռեսուրսների գնահատման արդյունքում նպատակային զարգացման տեսանկյունից ձեռնարկվելիք քայլերի ամբողջություն, որը նախատեսում է ռազմավարական քաղաքականությամբ համայնքի խնդիրների արդյունավետ լուծումը և նպատակային բյուջետավարման գործընթացի իրականացումը: Հնգամյա զարգացման ծրագրի մշակումը լուրջ աշխատանք է, որի կազմակերպմանն անհրաժեշտ է մոտենալ ամենայն պատասխանատվությամբ, կարևոր խնդիրներ են ծրագրի մշակման մեթոդական ցուցումների ապահովումը, ծրագրի առանձին բաժինների մշակման ժամանակացույցի սահմանումն ըստ կատարողների, ծրագրերի մշակման մեջ ներգրավված աշխատակիցների հրահանգավորումը, ծրագրի նախագծի ամփոփումն ու ավագանուն ներկայացնելը:

1. Համայնքի ղեկավարի ողջույնի խոսքը

Ողջունում եմ Ձեզ՝ Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Բամբակաշատ համայնքի բնակիչներին, ավագանուն, համայնքապետարանի և համայնքային ենթակայության բյուջետային հիմնարկների աշխատակիցներին:

Շնորհակալություն Ձեզ, հնգամյա զարգացման ծրագիրը համայնքի սոցիալ-տնտեսական իրավիճակի համալիր վերլուծության և առկա հիմնախնդիրների բացահայտման, ֆինանսական, տնտեսական, բնական և մարդկային ռեսուրսների գնահատման նկատմամբ հետաքրքրություն ցուցաբերելու համար:

Բամբակաշատ համայնքի զարգացման հնգամյա ծրագրերի կազմումը և կատարումը գերակա խնդիր է մեր համայնքում՝ միջնակարգ դպրոցում, մանկապարտեզում, մշակույթի տանը, բուժ-ամբուլատորիայում, փոստում, առևտրի սպասարկման օբյեկտներում:

Համայնքում 2017-21թթ. նախատեսվում է կատարել մի շարք կարևոր աշխատանքներ՝ դրանք են., 1. Խմելու ջրի ներքին ցանցերի վերանորոգում, 2. ոռոգման ջրի ներքին ցանցերի վերանորոգում 3. Մանկապարտեզի շենքի առաջին հարկի վերանորոգում, 4. Համայնքապետարանի շենքի վերանորոգում և գազաֆիկացում 5. Ֆուտբոլի դաշտի բարեկարգում, 6. Համայնքի երկրորդական փողոցների փոսալցում և հարթեցում:

Խիստ կարևորություն եմ տալիս գիտելիքներով զինված, համակողմանի և ներդաշնակ զարգացած սերնդի ձևավորմանը: Կցանկանամ, որ այս գիտակցումով առաջնորդվի յուրաքանչյուրը, մանկապարտեզ-դպրոցի մակարդակներով, քանզի մատաղ սերնդին է վստահված մեր ապագան՝ մեր վաղվա պետական, քաղաքական, մշակութային և հասարակական գործիչներին, կրթելու և հայեցի դաստիարակելու խնդիրը: Անհրաժեշտ է ապահովել այն գիտակցումը, որ այդ գիտելիքները պետք է ծառայեն ինչպես իրենց անձնական բարօրությանը, այնպես էլ ազգի ու հայրենիքի հզորացմանը:

Ծրագրի մշակմանը, քննարկմանն ու հաստատման աշխատանքներին իրենց մասնակցությունն են բերում ավագանու, համայնքապետարանի, դպրոցի, մանկապարտեզի, մշակույթի տան, փոստի, բուժամբուլատորիայի աշխատակազմներն ու անհատ քաղաքացիները: Նշեմ նաև, որ բացի ծրագրով նախատեսված աշխատանքների կատարումից, համայնքապետարանը կարգավորում է տարվա ընթացքում ստեղծված խնդիրները՝ առաջնահերթության կարգով:

Շնորհակալություն:

Համայնքի ղեկավար՝ Արթակ Եղիազարյան

2. Համայնքի իրավիճակի նկարագրություն

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Բամբակաշատ համայնքը գտնվում է Արմավիր մարզի հարավ-արևմտյան տարածաշրջանում, ծովի մակերևույթից 860մ բարձրության վրա, համայնքը գտնվում է Արարատյան դաշտավայրում, տարածքը կազմում է 975.84հա հողատարածք, համայնքը 186 տարեկան է, համայնքի հեռավորությունը պետական սահմանից կազմում է 25 կմ, մարզկենտրոնից 7 կմ, ավտոմայրուղուց 7 կմ, ՀԱԷԿ-ից 15 կմ, մայրաքաղաքից՝ 50 կմ: Համայնքը սահմանակից է Սարդարապատ, Ջրաշեն և Նոր Արմավիր համայնքներին: Չմռանը գյուղում ցուրտ է, ամռանը՝ շոգ: Հաճախ դիտվում է երաշտ, կարկտահարություն և ցրտահարություն:

Ժողովրդագրություն

Համայնքն ունի 3800 բնակիչ, այդ թվում՝

h/h	Տեղեկատվություն	մարդ
1	Տղամարդիկ	1918
	Կազմում են բնակչության %	50,5
2	Կանայք	1766
	Կազմում են բնակչության %	49,5
3	Թոշակառուներ	455
4	Փախստականներ	-
5	Միակողմանի ծնողազուրկ երեխաներ	28
6	Երկկողմանի ծնողազուրկ երեխաներ	2
7	Հաշմանդամներ	111
8	Ընտանեական նպաստների համակարգում գրանցված ընտանիքներ	79
9	Զոհվածների ընտանիքներ	-
10	Աշխատունակ բնակչության թիվը	2151
11	Աշխատանք ունեցողների թիվը, 16 և ավելի տարեկան	530
12	Գործազուրկներ	200
13	Գրանցված ընտրողների թիվը	2650
14	Ընտանիքների (ծխերի) թիվը	1256

Բնակարանային տնտեսություն

Համայնքի բնակֆոնդի ընդհանուր մակերեսը կազմում է 160.0հազ.քմ, 800 առանձնատներ՝ 160.0 հազ.քմ մակերեսով: Համայնքում կան 100 կիսակառույց առանձնատներ: Համայնքում կան ընտանիքներ, որոնք ունեն բնակարանի կարիք, նրանց քանակը տարեցտարի աճում է: Բազմաթիվ երիտասարդ ընտանիքներ ունեն տնամերձ հողամասեր, սակայն տնտեսական սուղ պայմանների պատճառով չեն կարողանում կառուցել առանձնատներ:

Հողօգտագործումը

h/h	Տարածքի անվանումը	Տարածքի չափը/հա/
1	Համայնքի հողային տարածքը	975.84
2	Գյուղատնտեսության նշանակության հողեր	658.31
3	Արդյունաբերական, ընդերք օգտագործման և այլ արտադրական նշանակության օբյեկտների հողեր	10.49
4	Էներգետիկայի, տրանսպորտի, կապի և կոմունալ ենթակառուցվածքների համար	5.29
5	Հատուկ պահպանվող տարածքներ /այդ թվում պատմական և մշակութային հողեր	6.33
6	Հատուկ նշանակության հողեր	---
7	Զբոսային տարածք	6.03
8	Բնակավայրի տարածք	289.39

2.1 Համայնքի ընդհանուր նկարագրությունը

Բամբակաշատ՝ նախկինում ՄՈՒՍՐԱՅԱՁԵՏ գյուղի մասին պահվել են մի քանի ուշագրավ տեղեկություններ Հայաստանի Հանրապետության պատմական արխիվներում, որոնք Բամբակաշատ գյուղի պատմության համար ունեն չափազանց կարևոր նշանակություն:

1831թ. հայկական մարզում առաջին աշխարհագիր և ցուցակագող շոպենի „Կամերալ Նկարագրություն” մատյանից երևում է, որ Մուլաբայազետ գյուղը ենթարկվելիս է եղել Սարդարապատ Բերդի տնօրեն՝ Հուսեին Սարդար Խան եղբայրներին, մատյանում նշված է, որ բերդը կառուցվել է 15 տարի առաջ, այսինքն 1816թ. միժամանակ նշված է, որ Մուլաբայազետ գյուղում եղել է 60 տնտեսություն:

Մուլաբայազետ գյուղը հիմնադրվել է միջնադարում, արևմտյան Հայաստանից գաղթված՝ Նոր Բայազետից, Տարոնից: Կառուցվել են հողաշեն, ցածրիկ մի քանի տուն՝ երազանքների բարակ մի շղթա, որը կարող էր հեշտությամբ կտրվել, սակայն ապրեց ոգու վերադարձը, ուրիշ այլ տեղ տուն ու հասցե չորոնեց:

Այսպես էր Մուլաբայազետի 19-րդ դարը, գյուղի բայազետ անվանը կպած էր Մուլաբառը, այդ անվան ճամփին քար գցվեց շատ ուշ 1935թ.-ին դարձն էր փոխվել, ժամանակները եկավ նոր անունը՝ ԲԱՍՐԱԿԱՇԱՏ: Ու թեև 1967 թ-ին իր դաշտերում

այլևս չերևաց „ՍՊԻՏԱԿ ՈՍԿԻ“, սակայն առ այսօր գյուղը մնում է Բամբակաշատ անունով:

Գյուղի նշանավոր կառույցը „ՄԱՅՐ ԱՍՏՎԱԾԱԾԻՆՆ“ է /1901-1914թթ./, որի ճակատագիրը նույնպես դժվարին է եղել: Տասնամյանկներ շարունակ չի ծառայել իր նպատակին, մինչև 1986թ. վերածվել էր թունաքիմիկատների պահեստի: 1986թ. բամբակաշատցիները դիմելով իրավասու մարմիններին, մայր աթոռ Ս. էջմիածին և Հատկապես արժանահիշատակ Կաթողիկոս Վազգեն Առաջինի աջակցությամբ Աստծո տունը ծառայեց իր կոչմանը:

Գյուղի կենտրոնում հուշարձանն է, քարե պատվանդանին հաղթանակած զինվորն է: Նրա հայացքը բարձրաբերձ խոհերի ընծյալ փունջ է բոլոր նրանց, ովքեր քարե լռության մեջ հաղորդության այբուբեն ունեն, լսում են տարիների փրկության կանչը: Հուշարձան-կոթողի մեծակտավ քարին զոհվածների 101 անուններն են, նրանք կողք-կողքի են՝ միաձույլ:

Իզուր չէ, որ գյուղը կոչվել է Բամբակաշատ, որտեղ „Սպիտակ Ոսկու“՝ բամբակի աննախադեպ բերք է ապահովել մեկ հեկտարից, որն էլ վերևների գնահատությամբ գյուղ է բերել վեց ոսկե աստղ:

Ներկա պահին գյուղը բաղկացած է 1256 տնտեսությունից, որտեղ ապրում են 3800 բնակիչ:

Մուլլաբայազետ գյուղում դպրոց հիմնվել է 1900 թվին, Բամբակաշատում՝ 1949թ-ին: Այսօր իր գործունեության, կազմակերպչական բարձր հատկանիշներով Գ. Պարոնյանը /դպրոցի տնօրեն/ կազմակերպելու փորձի ձեռք բերումը կապում է իր մեծ նախորդների հետ: Դպրոցն ունի 369 աշակերտ և 40 ուսուցիչներ:

Համայնքն ունի մշակույթի տուն, սակայն զրկվել է կինո, թատրոն կազմակերպելու հնարավորությունից, քանի որ ունի կապիտալ վերանորոգման կարիք: Բամբակաշատ համայնքն ունի գործող գրադարան 12500 կտոր գրքով:

Ֆուտբոլային խաղեր կազմակերպվում են դպրոցին կից մարզահրապարակում, որը միշտ զբաղեցնում են դպրոցականները, գյուղում գործում է մեկ բուժ.ամբուլատորիա,որի շենքը գտնվում է լավ վիճակում:

Համայնքն ունի և թույլ և ուժեղ կողմեր՝ համայնքն ունի ԲՈՒՀ-ի ավելի քան 200 շրջանավարտ՝ տարբեր մասնագիտությունների գծով, որոնք կարող են կազմակերպել համայնքի կրթության և դաստիարակության, մշակութային, շինարարական աշխատանքներ:

Համայնքի թույլ կողմերը խմելու ջրի և ոռոգման ջրի ներհամայնքային համակարգերի անմխիթար վիճակն է:

Ծնելիության նվազում կապված սոցիալ- տնտեսական վիճակի վատթարացման հետ, արտագնա աշխատանքի մեկնողների թվի աճ:

Համայնքի ռազմավարությունը և հիմնական նպատակները համայնքում բարեփոխումներ անցկացնելու ճանապարհով, հետևողականորեն բարելավել համայնքի բնակչության սոցիալ-տնտեսական,մշակութային և հանգստի պայմանները, գյուղը դարձնել գեղեցիկ, բարեկարգ և ամենաբարեկեցիկ բնակավայրերից մեկը:

Բարեփոխումներ կատարելու համար անհրաժեշտ է զարգացնել գյուղատնտեսությունն, համայնքն ապահովել շուրջօրյա խմելու ջրով և կանխել սուր

վարակիչ հիվանդությունները, կազմակերպել համայնքի բնակչության մշակութային կյանքը և հանգիստը:

Համայնքի ճանապարհները ասֆալտապատվել են դեռևս 2008թ.: Տարիների ընթացքում որոշակի հատվածներ վերանորոգվել են՝ 2016թվականին ասֆալտապատվեց նաև գերեզմանատուն տանող ճանապարհը, կատարվել և կատարվում են մասնակի վերանորոգումներ՝ փոսայցման և հարթեցման ձևով:

Շուրջ 17 կմ երկարությամբ գազատար խողովակաշար է անցկացվել, 600 բնակելի տներ վերագազաֆիկացվել են, կառուցվել է գազամատակարարման երկու կայան:

Բամբակաշատ համայնքում սկսած 1992 թ-ից, կատարվել են նոր հողահատկացումներ՝ 620 ընտանիքներ ստացել են տնամերձ հողամասեր: Նորաստեղծ թաղամասերում անցկացվել են խմելու ջրի ջրագծեր, ոռոգման առուներ, գազաֆիկացված է նորակառույց առանձնատները, տեղադրվել է երկաթբետոնյա նոր էլեկտրասյուներ, կառուցվել են նոր ենթակայաններ:

Համայնքում հիմնականում զբաղվում են խաղողագործությամբ և բանջարաբոստանային կուլտուրաների մշակությամբ: Խաղողի մշակությամբ զբաղվում են շատ վաղուց և այն համարվում է համայնքում մշակության հիմնական ուղղություն: Ներկայումս խաղողագործությունն ավելի է զարգանում՝ արդեն ունենք 253 հա խաղողի այգի:

Համայնքում զբաղվում են նաև անասնապահությամբ: Այս ուղղությունն էլ զարգացման միտում ունի:

Բամբակաշատ համայնքն ապրում է իր հոգսերով և խնդիրներով:

2.2 Համայնքի սոցիալ-տնտեսական իրավիճակ

Համայնքի 2016թ բյուջեի եկամուտների և ծախսերի մասին տեղեկություններ /հազ.դրամ/

	Եկամուտների տեսակները	Տարեկան	
		պլան	կատարող.
1.	Հողի հարկ	10583.3	10535.5
2.	Գույքահարկ	7545.2	7320.6
3.	Տեղական տուրք	0	0
4.	Տեղական վճար	1817.4	1726.8
5.	Հողի վարձակալության վճար	900.0	909.7
6.	Գույքի վարձակալության վճար	0	0
7.	Ծառայությունների մատ. վճարներ	400.0	291.6
8.	ՀՀ պետական բյուջեից դոտացիա	48313.6	48315.5
9.	ՀՀ պետական բյուջեից համայնքի բյուջեին տրամադրվող այլ դոտացիա	868.2	868.2
10.	Տարեսկզբի ազատ մնացորդ	1927.8	1927.8
11.	Հողի օտարումից եկամուտ	1060.0	1060.0
Ընդամենը		71918.1	71363.9

Ընդհանուր եկամուտների մեջ համայնքի սեփական եկամուտների բաժինը կազմում է 32%:

h/h	Հիմնարկներ	Տարեկան	
		պլան	կատարող.
1	Օրենսդիր և գործադիր մարմիններ	21998.2	20677.1
2	Հանգիստ, մշակույթ և կրոն	7700.0	7141.2
3	Սոցիալական պաշտպանություն	6000.0	6000.0
4	Ընդհանուր բնույթի հանրային ծառայություններ	1312.1	752.4
5	Նախադպրոցական կրթություն	5120.0	5120.0

6	Ջրամատակարարում	17050.0	17050.0
7	Աղբահանում	2640,0	2640,0
8	Արտաքին լուսավորում	3800.0	3722.4
9	Տրանսպորտ ճան. տնտ. կապ	950.0	950.0
10	Նվիրատվություն շահույթ չհետապնդող կազմակ.	0	0
11	Վարչական սարքավորումներ	1927.8	750.0
12	Կապիտալ նորոգումների ծախսեր	5060.0	3788.0
	Ընդամենը	71918.1	66941.1

Համայնքում ունենք <<Սուրբ Աստվածածին>> եկեղեցին, որը տարվա ընդացքում հյուրընկալում է տասնյակ զբոսաշրջիկների:

Համայնքն ունի, հիմնանորոգված միջնակարգ դպրոց, որն ունի 369 աշակերտ, նախատեսված է 600 աշակերտի համար, ուսուցչական կոլեկտիվը բաղկացած է 40 հոգուց:

Համայնքն ունի մեկ մանկապարտեզ, աշխատում է վեց ամիս, ներկայումս հաճախում են 80 սան, կոլեկտիվը բաղկացած է 15 հոգուց:

Համայնքում գործում է մեկ բուժամբուլատորիա, նախատեսված է օրական 25-30 մարդու սպասարկման համար, կոլեկտիվը բաղկացած է 7 հոգուց:

Համայնքում ընտանեկան նպաստների համակարգում գրանցված են 79 մարդ: Բանբակաշատցիները բարձր մտավոր կարողություններով օժտված անձինք են, որոնք զբաղեցնում են բարձր պաշտոններ պետական տարբեր կառույցներում: Համայնքում առկա աշխատուժի միայն 60%-ն է զբաղվում գյուղատնտեսությամբ, 15%-ը զբաղվում է տնային տնտեսությամբ, 7%-ը աշխատում են տարբեր հիմնարկներում իսկ 18%-ը գործազուրկ է:

2.3. Համայնքում իրականացվող ծրագրեր

Բանբակաշատ համայնքի տարածքում պետության կողմից գալիք հինգ տարիների ընթացքում նախատեսվող /շարունակվող/ հանրապետական, մարզային ծրագրեր և միջոցառումներ նախատեսված չեն:

Չեն նախատեսված նաև հարևան համայնքների հետ համատեղ, գալիք հինգ տարիների համար, նախատեսվող (շարունակվող) միջհամայնքային համագործակցության նպատակային ծրագրեր և միջոցառումներ:

Չեն նախատեսված նաև միջազգային և տեղական դոնոր կազմակերպությունների, արտասահմանյան երկրների համայնքների հետ համագործակցության շրջանակներում նախատեսվող (շարունակվող) ծրագրեր և միջոցառումներ:

Չեն նախատեսված նաև տեղացի և արտասահմանյան բարերարների կողմից իրականացվող ծրագրեր:

Չեն նախատեսված նաև համայնքի վարչական տարածքում մասնավոր ընկերությունների կողմից նախատեսվող (շարունակվող) ծրագրեր, ներդրումներ և միջոցառումներ:

Պետության կողմից իրականացվող ծրագրերի ներդրումը խթան կհանդիսանա համայնքի զարգացման համար /սակայն դեռևս այն նախատեսված չէ/:

2.4. Համայնքի ֆինանսական իրավիճակի նկարագրությունը և ֆինանսական կանխատեսումները

2017-2021թթ. սոցիալ տնտեսական զարգացման հնգամյա ծրագրով ըստ առանձին բնագավառների նախատեսվող ծրագրերի, միջոցառումների և աշխատանքների համառոտ ամփոփագիր

N	Ծրագրի, միջոցառման, աշխատանքի անվանումը	ժալվալը	ֆինանսական միջոցների անհրաժեշտ բանակը /հազ.դրամ/	ֆինանսավորման աղբյուրները			կատարման ժամկետները					պատասխանատու
				համայնքի բյուջե	դոնոր կազմակ	այլ/պետ բյուջե և այլն/	2017թ. ծավալը ֆին.միջոց	2018թ. ծավալը ֆին.միջոց	2019թ. ծավալը ֆին.միջոց	2020թ. ծավալը ֆին.միջոց	2021թ. ծավալը ֆին.միջոց	
1	Համայնքում ոռոգման ջրագծերի հիմնանորոգում	10կմ	1500	1500	-	-	300	300	300	300	300	
2	Համայնքի խմելու ջրագծերի հիմնանորոգում	20կմ	2000	2000	-	-	400	400	400	400	400	համայնքի ղեկավար
3	Համայնքի երկրորդական փողոցների փոսալցում և հարթեցում	16կմ	2000	2000	-	-	400	400	400	400	400	համայնքի ղեկավար
4	Մանկապարտեզի շենքի 1-ին հարկի վերանորոգում	600քմ	10000	10000	-	-	2000	2000	2000	2000	2000	համայնքի ղեկավար
5	Համայնքապետարանի շենքի վերանորոգում և գազաֆիկացում	571քմ	20000	20000	-	-	4000	4000	4000	4000	4000	համայնքի ղեկավար

6	Ֆուտբոլի դաշտի բարեկարգում	400քմ	3000	3000	-	-	600	600	600	600	600	համայնքի ղեկավար
---	----------------------------	-------	------	------	---	---	-----	-----	-----	-----	-----	------------------

2.5.Զարգացման խոչնդոտներ և դժվարություններ

Բամբակաշատ համայնքի սոցիալ-տնտեսական զարգացման համար խոչնդոտները և դժվարությունները կարող են առաջանալ ներքոհիշյալ խնդիրներից.

Համայնքում առկա են գյուղատնտեսական նշանակության վարելահողեր, որոնք ոռոգման ջրի լիարժեք առկայության դեպքում կմշակվեին և համայնքում կբացվեր նոր աշխատեցողներ՝ կբարելավվեր համայնքի բնակիչների սոցիալական վիճակը:

Համայնքում նախադպրոցական կրթության և արտադպրոցական դաստիարակության կազմակերպման համար խոչնդոտներ են հանդիսանում դպրոցում, մշակույթի տանը և համայնքապետարանում եղած սակավ ֆինանսական միջոցները, որոնց առկայության դեպքում կբացվեր խմբակներ, դասընթացներ, կկազմակերպվեր զբոսանքներ՝ դեպի հանրապետության տեսարժան վայրեր, բնության գիրկ, մատաղ սերնդին՝ դեռահասներին ու պատանիներին կծանոթացնեին հայրենի բնությանը, գեղատեսիլ վայրերին

Համայնքում բնակչության սոցիալական պաշտպանություն գործընթացը, ավելի նպատակային, կազմակերպելու համար անհրաժեշտ է ֆինանսական միջոցներ, որոնք կուղղվեն բնակչության բարեկեցության ապահովության համար՝ համայնքի ընտանիքներում յուրաքանչյուր ծնվածների, մահացածների, հիվանդությունների դեպքում կցուցաբերվեր դրամական օգնություն: Հենաշարժական խնդիրներ ունեցող բնակիչներին համապատասխան սայլակներով և սարքավորումներով ապահովելու համար ունենալ միջոցներ: Համայնքում ուսումնական հաստատությունների, խանութների, բուժամբուլատորիայի, մշակույթի տան, հասարակական օբյեկտների մուտքերը հարմարեցնել հաշմանդանության սայլակներին համապատասխան: Նման միջոցառումները կնպաստեն հաշմանդանների մասնակցությանը հասարակական կյանքում:

Համայնքում ֆիզիկական կուլտուրայի և առողջ ապրելակերպի խրախուսման համար եղած սպորտային ֆուտբոլի, կարատեի պարապմունքներից զատ նպատակահարմար է բնակչության շրջանում ակտիվացնել կազմակերպել վոլեյբոլի, վազբի, բոքսի և այլ սպորտային խմբակներ, հավաքներ, մրցույթներ, պարապմունքներ:

Համայնքում բնակարանային շինարարության խթանման նպատակով համայնքի բնակիչները, ովքեր ունեն տնամերձ հողամասեր՝ ցանկանում են կառուցել բնակելի տներ, փաստաթղթերի ձեռք բերումը, որը վերաբերվում է տարբեր հիմնարկություններից ստացվող թույլտվություններին դարձնել էլ ավելի դյուրին և հասանելի: Բնակչության Ֆինանսական հնարավորությունների ավելացումը՝ աշխատանքով ապահովված լինելու դեպքում:

Համայնքում անհրաժեշտություն է, նոր այգիների հիմնումը, աղբահանության հաճախակիացումը, համանքային գերեզմանատների պահպանումը՝ ցանկապատումը, բարեկարգումը, կանաչապատումը, որոնց համար անհրաժեշտ է ֆինանսական միջոցներ:

Համայնքում պետության պաշտպանության իրականացումը, աղետների ռիսկերի նվազեցումը, արտակարգ իրավիճակներում բնակչության պաշտպանությունը ու քաղաքացիական պաշտպանությունը իրականացնելու, կազմակերպելու համար անհրաժեշտ է տեխնիկա և տրանսպորտային միջոցներ:

Ոռոգման ջրատարի ներհամայնքային համակարգը կազմված է բետոնյա կիսախողովակներից, որի 30-40 %-ը վնասված է, որովհետև ունի 40 տարվա վաղեմություն այդ իսկ պատճառով ունենում ենք ոռոգման ջրի շատ մեծ կորուստ:

Համայնքում բնակչության առողջության պահպանման և բարելավման ծրագրերի իրականացման, արդյունավետ ու մատչելի բժշկական սպասարկման պայմաններ ստեղծելու համար անհրաժեշտ է լրացուցիչ ֆինանսական մասհանումներ:

Համայնքում չի իրագործվում բարեգործություն, որը կխթաներ համայնքում մշակութային, գիտական, առողջապահական, մարզական, սոցիալական և այլ հաստատությունների հիմնադրման, ֆինանսավորման և ֆինանսական անկախության գործում:

2.6 Համայնքի ուժեղ և թույլ կողմերի հնարավորությունների և սպառնալիքների (ՈւԹՀՍ) վերլուծություն

Ուժեղ կողմեր	Թույլ կողմեր
<ol style="list-style-type: none"> 1. Բարենպաստ բնակլիմայական պայմանները 2. Հողային բավարար ռեսուրսները 3. Մարդկային ռեսուրսներով ապահովվածությունը և կրթական բարձր մակարդակը 4. Համայնքապետարանի, դպրոցի, մանկապարտեզի, բուժ-ամբուլատորիայի, փոստի, գրադարանի կանոնավոր աշխատանքները 5. Համայնքում գազի, էլեկտրականության, խմելու և ոռոգման ջրերի բավարար մատակարարումը 6. Համայնքի գլխավոր հատակագծի առկայությունը 7. Կանոնավոր տրանսպորտի առկայությունը 8. Կապի բարձր որակի առկայությունը 	<ol style="list-style-type: none"> 1. Համայնքի գյուղատնտեսական նշանակության հողերի որոշակի հողակտորների անմշակ լինելը 2. Մեծ թվով սոցիալապես անապահով ընտանիքների առկայությունը 3. Խմելու ջրի ներհամայնքային ցանցի վատ վիճակը 4. Զբաղվածության ցածր մակարդակը 5. Համայնքում կանաչ գոտիների պակասը 6. Սահմանամերձ լինելը 7. Հողի հարկի գանձումների դժվարությունները 8. Համայնքի բնակիչների անվճարունակությունը
Հնարավորություններ	Սպառնալիքներ
<ol style="list-style-type: none"> 1. Սահմանների վերաբացում 2. Զերմոցային տնտեսության զարգացում 3. Փոքր և միջին բիզնեսի զարգացում 4. Գյուղմթերքների և հումքի գների բարձրացում 5. Տարբեր օգնություններ (դոնորներ, ներքին և արտաքին սփյուռք 6. Նոր մշակաբույսերի շրջանացում 7. Հայաստանի սոցիալ-տնտեսական զարգացում 	<ol style="list-style-type: none"> 1. Բնակլիմայական պայմանները ա/ գլոբալ տաքացումը բ/ երաշտը գ/ ցրտահարությունը դ/ կարկտահարությունը 2. Բնակչության արտագաղթը 3. Զինադադարի խախտում 4. Գյուղմթերքների և հումքի գների իջեցում

3. Համայնքի նպատակների սահմանում և գործողությունների սլանավորում

3.1 Համայնքի զարգացման տեսլականը

Բամբակաշատ համայնքի հնգամյա զարգացման ծրագրում նախատեսված աշխատանքների իրականացման արդյունքում համայնքը անհատ ներդրողների հետ համագործակցությամբ կունենա փոքր և միջին բիզնեսի զարգացում, կզարգանա ջերմոցային տնտեսությունը, որի արդյունքում կստեղծվեն մի քանի տասնյակ աշխատատեղեր: Համայնքը կսկսի կայուն զարգանալ, կավելանան բնակչության իրական եկամուտները, կկրճատվի աղքատությունը:

Փողոցների բարեկարգման փոսալցման, հարթեցման, խմելու և ոռոգման ջրի ներքին ցանցի նորոգման, ֆուտբոլի դաշտի բարեկարգման, մանկապարտեզի և համայնքապետարանի շենքի հիմնանորոգման ու գազաֆիկացման համար, համայնքի բյուջեից կծախսվի 38.5 մլն դրամ: Ցուցանիշների արժեքները սահմանվել են տարեկան կտրվացքով:

Համայնքի հնգամյա զարգացման ծրագրի իրականացմամբ ակնկալվում է համայնքի բնակիչների իրական եկամուտների 15%-ի աճ, իսկ ոռոգման համակարգի վերականգնման դեպքում գյուղատնտեսության արդյունավետությունը կբարձրանա 20%-ով:

Աղքատության շեմից ցածր գտնվող տնտեսությունների հարաբերությունը համայնքի ընտանիքների ընդհանուր թվին՝ 10%:

Համայնքի սեփական եկամուտների աճը՝ 27.7%:

Համայնքում գրանցված բնակիչների թվի փոփոխությունը /չպայմանավորված բնական աճով/ նախորդ տարվա համեմատ՝ 1%:

3.2 Համայնքի զարգացման անմիջական նպատակներ

ԾՐԱԳՐԻ ԱՆՁՆԱԳԻՐ ԹԻՎ 1

« Խմելու ջրի ներքին ցանցի վերանորոգմանը » (Ծրագրի անվանում)

Պարտադիր խնդիր, որի լուծմանն է միտված ծրագիրը	Աջակցություն խմելու ջրի ներքին ցանցի վերանորոգմանը						
Ծրագրի անմիջական նպատակ	Ցուցանիշներ	Ելակետային արժեք	Թիրախային արժեքներ				
		2016	2017	2018	2019	2020	2021
		-	400 000	400 000	400 000	400 000	400000
Ծրագրի միջանկյալ արդյունքներ Աջակցություն խմելու ջրի ներքին ցանցի վերանորոգման	1.						
	Ցուցանիշներ	Ելակետային արժեք	Թիրախային արժեքներ				
		2016	2017	2018	2019	2020	2021
		-	200 000	200 000	200 000	200 000	200000
	2.						
	Ցուցանիշներ	Ելակետային արժեք	Թիրախային արժեքներ				
2016		2017	2018	2019	2020	2021	
-		200 000	200 000	200 000	200 000	200000	
Ծրագրի հիմնական գործողությունները	1-ին միջանկյալ արդյունքն ապահովող գործողություններ 1.1 Խողովակների ձեռք բերում 1.2. Տեխնիկայի վարձակալում 2-րդ միջանկյալ արդյունքն ապահովող գործողություններ 2.1. ավազի ձեռք բերում 2.2 Խողովակների մոնտաժում, փոսայցում						
Ծրագրի բյուջեն	Ընթացիկ ծախսեր՝ 1000 000 դրամ Կապիտալ ծախսեր՝ 1 000 000 դրամ Ընդհանուր բյուջեն՝ 2 000 000 դրամ						
Ծրագրի իրականացման համար անհրաժեշտ այլ ռեսուրսներ	Աշխատուժ, նյութեր և տեխնիկա						
Ծրագրի հիմնական ռիսկերը	Խմելու ջրի ներքին ցանցի վերանորոգում						
Ծրագրի հիմնական շահառուները	Համայնքի բնակիչները						
Ծրագրի սկիզբ և ավարտ	2017-2021թթ.						
Ծրագրի համառոտ նկարագրություն	Համայնքում խմելու ջրի ներքին ցանցի վերանորոգման արդյունքում, ջրի սանիտարահիգիենիկ վիճակը կբարձրանա, ծորակներից ավելի մաքուր ջուր կհոսի:						

ԾՐԱԳՐԻ ԱՆՁՆԱԳԻՐ ԹԻՎ 2

« Ոռոգման ջրատարերի վերանորոգմանը »

(Ծրագրի անվանում)

Պարտադիր խնդիր, որի լուծմանն է միտված ծրագիրը	Աջակցություն ոռոգման ջրատարի վերանորոգմանը						
Ծրագրի անմիջական նպատակ	Ցուցանիշներ	Ելակետային արժեք	Թիրախային արժեքներ				
		2016	2017	2018	2019	2020	2021
		-	300 000	300 000	300 000	300 000	300 000
Ծրագրի միջանկյալ արդյունքներ	1.						
	Ցուցանիշներ	Ելակետային արժեք	Թիրախային արժեքներ				
		2016	2017	2018	2019	2020	2021
		100 000	100 000	100 000	100 000	100 000	
	2.						
	Ցուցանիշներ	Ելակետային արժեք	Թիրախային արժեքներ				
2016		2017	2018	2019	2020	2021	
	200 000	200 000	200 000	200 000	200 000		
Ծրագրի հիմնական գործողությունները	1-ին միջանկյալ արդյունքն ապահովող գործողություններ 1. Տեխնիկայի վարձակալում 1.2. խողովակների, կիսախողովակների ձեռքբերում 2-րդ միջանկյալ արդյունքն ապահովող գործողություններ 2.1. ավազի, ցեմենտի ձեռքբերում 2.2 փոսայցում						
Ծրագրի բյուջեն	Ընթացիկ ծախսեր՝ 500 000 դրամ Կապիտալ ծախսեր՝ 1 000 000 դրամ Ընդհանուր բյուջեն՝ 1 500 000 դրամ						
Ծրագրի իրականացման համար անհրաժեշտ այլ ռեսուրսներ	Աշխատուժ, նյութեր և տեխնիկա						
Ծրագրի հիմնական ռիսկերը	Ոռոգման ջրատարի վերանորոգում						
Ծրագրի հիմնական շահառուները	Համայնքի բնակիչները						
Ծրագրի սկիզբ և ավարտ	2017-2021թթ						
